



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ 418 Հ
Ա. ԴԱՆԻԵԼԻԱՆ

ՎՈՋԻԱՐԻ ՅԵՂԵՐԸ,
ԲՈՒԾՈՒՄԸ, ԿԵՐԱԿՐՈՒՄԸ
ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

ԳԵՏԶՐԱՅ

1931

ՕԵՐԵՎԱՆ

636 2/3P 2017

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

№ 31 (122) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԵԿԵՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ № 31 (122)

ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ԴԱՆԻԵԼԲԵԳ

ՎՈՉԽԱՐԻ ՑԵՂԵՐԸ, ԲՈՒԾՈՒՄԸ,
ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ



ՊԵՏՐԶԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

**ՎՈՅԽԱՐԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԽՈՐՀՐԴԱ-
ՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Խորհրդային Հայաստանի անասնապահու-
թյան ճյուղերի մեջ վաչխարաբուծությունը քա-
նակով առաջին տեղն է բռնում:

	1929 թ.	1930 թ.	1931 թ.
Վաչխարների քա- նակությունը	1.467,7	1.297,3	1.425,0
Խոշոր յեղջյուրավոր անասուն. քանակութ.	835,8	733,5	784,8
Ձիերի քանակու- թյունը	44,4	47,1	54,3

Թվում է, թե ինչպես են երբևէ, այնպես էլ ար-
տաքին շուկաներում, մսի և կաթնալիցն ոթերք-
ների պահանջի ուժեղացման՝ նմանապես և մեր
տեքստիլ արդյունաբերության պրոգրեսիվ զար-
գացման և նրա հում նյութի պահանջի մեծա-
նախու հետևանքով, վաչխարաբուծությունը՝ իր
ահադին առկալության համապատասխան, վոր-
պես անտեսապես շահավետ ճյուղ, պիտի կանգ-



1-293/9ր

Հրատ. № 1703

Գլավլիտ. № 6546 (բ) Գտովեր № 3375 Տիրած 5000

Պետրատի տպարան, Յերևան

նաժ լինե՛ր արժանի բարձրութեան վրա: Սակայն տվյալ ճյուղը գլուղատնտեսութեան ընդհանուր եկոնոմիկայի մեջ յերկրորդական դեր է խաղում և նրա ամբողջ արտադրանքը՝ անասնապահութեան ամբողջ արտադրանքի համեմատութեամբ կազմում է միայն 26,7⁰/₁₀:

Իրենց տնտեսային հատկութիւններով վոչխարները չափազանց բազմատեսակ են: Վոչխարների ցեղերից վոմանք հայտնի չեն իրենց բրդատուութեամբ, վոմանք մսատուութեամբ, վոմանք կաթնաբերութեամբ, բայց համարյա բոլորն առանց բացառութեան, հավասարապես ոգտագործվում են այս բոլոր արտադրանքների համար—մսի, կաթի և բրդի համար միաժամանակ. ահա, թե ինչու մեր վոչխարներին, իրենց արտադրանքի բնույթով կարելի չէ հաշվել մսա-կաթնա—բրդացունների շարքում:

Ինչպես բազմազան է մեր վոչխարը արդյունավետութեան իմաստով, այնպես էլ նա բազմազան է իր ցեղային կազմով: Խ. Հայաստանի համեմատաբար փոքր տերիտորիայի վրա մենք ունենք վոչխարների մի քանի ցեղ եր—Մաղելի, Բոգախ, Բալբաս, Ղարաբաղ և այս ցեղերի բազմատեսակ խոռոնուրդները: Խ. հայաստանի վոչխարները բացառապես կոշտաբուրդ են:

Մեր վոչխարաբուծութիւնը ինչպես հայտ-

նի չէ յերկու ձեւի յե—քոչվոր և նստակյաց՝ բազմաթիւ անցման աստիճաններով:

Տնտեսավարութեան այսպիսի ձևը վոչխարաբուծութեանը անուղղելի կորուստներ է պատճառում, վորովհետեւ ահագին հոտերի տեղափոխութիւնը տասնյակ և հարյուրավոր կիլոմետրներով՝ կերի տարածութիւններն ոգտագործելու համար, բացասաբար է անդրադառնում նրանց թե՛ քանակի և թե՛ վորակի վրա:

Հեռավոր քոչերի կրճատումը, ալպիական տիպի տնտեսութիւնների ստեղծելը խոշոր սոցիալիստական տնտեսութիւնների՝ սովխոզների և կոլխոզների կազմակերպման սկզբունքներով կերի բազայի կազմակերպումը, չափազանց եյակազդեալներ են կանոնավոր և ըացիոնալ վոչխարաբուծութեան կազմակերպման համար:

Վոչխարաբուծութեան ասպարեզում—հիմնական խնդիր է նրա քանակական և վորակական զարգացումը և նրա արտադրանքի բարձր ասլրանքայնութեան ստեղծումը:

Սա հնարավոր է միմիայն ամբողջ վոչխարաբուծական տնտեսութեան վերակառուցման դեպքում խոշոր, հանրաշնացված տնտեսութեան հիմունքներով և խոշոր վոչխարաբուծական սովխոզներ և կոլխոզներ կազմակերպելով:

Ի՞նչ ուղիներով մենք պիտի բարձրացնենք

մեր վոչխարների արտադրողականութիւնը: Այս հարցը ամենաառեւտականն է մեր վոչխարաբուծութեան վերակազմութեան ժամանակ:

Մեր տեղային վոչխարները հարմարված են տեղական պայմաններին և վոր գլխավորն է կերակրման ռեժիմին: Բացի սրանից մենք վոչ մի տվյալ չունենք նրանց արտադրողականութեան մասին և գիտա—հետազոտական աշխատանքի ուղիով չենք հաստատել նրանց բովարար արտադրողականութեան ձեռք բերելու ընդունակութեան բացակայութիւնը, ուստի վոչխարների լավացումը մեզ մոտ, հիմնականում, պիտի տանել «իր մեջ» մեթոդով՝ կաթնաբերութեան, բերքատվութեան և կենդանի քաշը ավելացնելու ուղղութեամբ:

Ամեն մի կասկածից դուրս է, վոր վոչխարների ոտարկերկրյա միջանի ցեղերը—մերինոսները, կարակուլները, Մնգլիական մսալիները—կարող են տալ լիովին բարեհաջող արդուներ շնորհիվ Հայաստանի մի քանի շրջանների կլիմայական և կերային պայմաններին:

Բաց այս գործին մենք պիտի ձեռնարկենք շատ մեծ զգուշութեամբ հաշիւի առնելով բոլոր ֆակտորները և անպայման վոչխարաբուծութեան Զոնային կայանի անմիջական ղեկավարութեան և հսկողութեան տակ: Յեւ միայն բարեհաջող հետեւանքների հասնելուց հետո՝ խորացնենք ալի աշխատանքը սովխոզներում և կոլխոզներում:

Վոչխարաբուծութեան զարգացման գործում վոչ պակաս կարեւոր դեր է խաղում կերի բազան կազմակերպելու խնդիրը:

Անհրաժեշտ է բնական կերի բազայի—արտերի և խոտհարքների բարելավում կատարել, մտցնել կերի խոտերի և արմատապտուղների ցանք վոչխարների արոտի ժամանակաշրջանը յերկարելու համար՝ մանավանդ աշնանը, շինել բինաներ վոչխարներին արոտատեղերում պահելու համար, պաշար ամբարել վատ յեղանակի համար, այս բոլորը վոչխարի կերի հարցը լուծելու հնարավորութեաններ կստեղծեն:

Յեւ յեթե այս բոլորի հետ միասին կոլխոզներում ու սովխոզներում արտադրողականութեան հաշվառում կատարենք և սրա համաձայն ընտրութիւն, կազմակերպենք կաթի վերամշակումը թանգարժեք մթերքների, մենք կարող ենք ասել, վոր վոչխարաբուծութեան զարգացման խնդիրները մենք կհանենք մեռած վիճակից և նա կը սուսա գլուղատնտեսութեան մշտական և ճիշտ արդիւնք տվող ճյուղ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎՈՉ- ԽԱՐՆԵՐԻ ՅԵՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Խորհրդային Հայաստանում պահվող վոչ-
խարների բոլոր տեսակները դասակարգ են,
(ճարպապուշ), բայց ամեն մի դասվել մյուսից
տարբերվում է պուշի ձևով, ճարպի կապելու
բնույթով և պուշի կորացման ձևով:

Մեր համարյա բոլոր վոչխարները այս նը-
շաններով բաժանվում են յերկու յենթախմբի:

Առաջին յենթախումբը բնորոշվում է նրա-
նով, վոր պուշը կորացած է հակական Տ տառի
նման և ճարպը նրա վրա կապում է յերկու բար-
ձի ձևով՝ մի մեծը տեղավորվում է պուշի յեր-
կարությամբ՝ սկսած արմատից մինչև կցորդի
կորացումը, իսկ մյուս փոքրը տեղավորված է
կցորդի շուրջը: Այս յենթախմբին են պատկա-
նում Մազեխ և Բալբաս տեսակները:

Յերկրորդ յենթախումբը բնորոշվում է նրա-
նով, վոր ունի կարճ, կամ միջակ յերկարության
պուշ, վորը միջին մասում կորանալով՝ ուղղվում
է դեպի վեր և սրբանվուսկրից մի քիչ ներքև,
նորից կորանում է դեպի ցած: Պուշի ծայրը ա-
ռանց ճարպի յե: Այս յենթախմբին պատկանում
են Բողախ և Ղարաբաղ տեսակի վոչխարները:

Մեր վոչխարների ընդհանուր բնութագրերը

սահմանելուց հետո՝ անցնենք ամեն մի տեսակի
նկարագրության առանձին-առանձին:

ՄԱԶԵԽ ՎՈՉԽԱՐԸ.— ամենատարածված
տեսակն է Հայաստանում. նրանց կարելի յե տես-
նել համարյա բոլոր շրջաններում: Այս վոչխար-
ները շատ խոշոր են և աչքի յեն ընկնում մեծ
կաթնատվությամբ:



Նկ. 1. Մազեխ վոչխարը:

Մազեխի գույնը կինամոնագույն է (դարչին)
զանազան նրբերանգներով: Հազվագյուտ դեպ-
քերում պատահում են սև և գորշ-կապտագույն
բրդով: Դուրսը և վոտքերը սովորաբար ավելի
մուգ գույնի յեն լինում, քան իրանը: Կենդանի
քաշը 45-55 կիլոգրամ, իսկ խոյերը հասնում են
մինչև 78 կիլոգրամ: Միսը կշռում է մոտավո-
րապես 45-55%: Պուշի ճարպը լինում է 3-ից
մինչև 6 կիլոգրամ, իսկ խոյերինը հասնում է

մինչև 13 կիլոգրամ: Կաթնաբերութունը բարձր է և հասնում է մինչև 60 կիլոգրամի: Մազերն վոչխարների բուրդը կոշտ է: Մի խուզվածքից ստացվում է 1-1,5 կիլո բուրդ: Խոյերը համեմատաբար շատ բուրդ են տալիս և մի խուզվածքին տալիս են լեքբեժն մինչև 2,5 կիլոգրամ:



Նկ. 2. Բալբաս վոչխարը:

ԲՍԱԲԱՍ ՎՈՉԽԱՐՆԵՐԸ.— Բալբաս տեսակի վոչխարները պոչի կազմվածքով նման են Մազերի վոչխարներին: Նրանք նույնպես խոշոր են: Նրանց գույնը սպիտակ է, բայց գլխին՝ աչքերի մոտ, դնչին, ականջներին, նմանապես և վոտքերին՝ կճղակների մոտ, լինում են, Բալբաս տեսակի համար բնորոշ, սև նշաններ: Նրանց բուրդը շատ ավելի լավ տեսակի լե. շուկայում թանկ է գնահատվում: Վոչխարի կենդանի քաշն է 40-50 կիլոգրամ, իսկ խոյերինը հասնում է մինչև

չև 88 կիլոգրամի: Մնացած նշաններով նման են Մազերի վոչխարներին:

ԲՈՉԱԽ ՎՈՉԽԱՐՆԵՐԸ.— Բողախ վոչխարները խորհրդավորն Հայաստանում տարածված են գլխավորապես նախկին Լոռվա գավառի Մտեփանավանի, Ղարաքիլիսայի, Իջևանի, Շամշադինի, և Ալլանվերդու շրջաններում:

Բողախի պոչի ձևը, ճարպ կապելու բնույթը և պոչի կորացման ձևը հատուկ են մեր վոչխարների յերկրորդ յենթախմբին:



Նկ. 3. Բողախ խոյը:

Վոչխարի կենդանի քաշն է 32-48 կիլոգրամ. խոյերինը հասնում է մինչև 64 կիլոգրամի: Խոյերն ունեն լավ զարգացած պոզեր: Եզերը առանց պոզի լին: Բողախ վոչխարի հիմնական գույնը կեղտոտ սպիտակագույն է, բայց պատահում են կինամոնագույն, գորշագույն, բաց-

կարմրագույն, սև ալեխառն: Գլխի ներկվածքը կինամոնագույն, բաց կարմրագույն, մուգ կինամոնագույն և շեկագույն: Բուրդը թեյեվ կոշտ է, բաց հատկությամբ լավ է, քան Մազեխինը: Մի վոչխարից միջին հաշվով ստացվում է մինչև 2 կիլոգրամ բուրդ: Մսի հատկությունները լավն են: Շատ թանձր կաթ են տալիս, վորից լավ պանիր է պատրաստվում, միջին հաշվով 10-15 կիլոգրամ: Խորհրդալին Հայաստանի մի քանի շրջաններում Բոգախ վոչխարներին անվանում են Գոմրալ, Հըռիկ: Բոգախ և Թուշի վոչխարների խառնուրդը (վոր կատարվում է բրդի վորակը բարձրացնելու համար) կոչվում է դոնմա:



Նկ 4, Ղարաբաղի վոչխար:

ՂԱՐԱԲԱՂ ՎՈՉԽԱՐՆԵՐ: Ղարաբաղ վոչխարները գլխավորապես տարածվում են հախկին Ձանգեգուրի գավառի շրջաններում: Չափերով նրանք

փոքր են Մազեխ և Բալբաս վոչխարներից: Գույնը գլխավորապես բաց կինամոնագույն և սուրճի գույնի լե, բաց պատահում են և մոխրագույն սև: Գլուխը ներկած է լինում կինամոնագույնի գանազան նրբերանգներով: Վերջավորությունները ներկված են ավելի մուգ գույներով: Բրդի հատկությամբ Ղարաբաղի վոչխարները բոլորից վատ են: Վոչխարից հաշվում են մոտ $2-2\frac{1}{4}$ կիլոգրամ բուրդ: Վոչխարի կենդանի քաշը տատանվում է 39-43 կիլոգրամ: Խոյերինը հասնում մինչև 58 կիլոգրամի: Ղարաբաղի վոչխարների կաթնաբերությունը բավական զարգացած է: Տարեկան կիթը հավասար է 50-55 կիլոգրամի: Ղարաբաղի վոչխարները լինում են մի քանի տիպի՝ անականջ՝ քյզլբա, կարճականջ՝ քյուլբա, խոշորականջ՝ կուլախիլ:

Ղարաբաղի վոչխարների և Մազեխի խաչածեվման դեպքում ստացվում են մետեսներ, վոր Դըմըխ են կոչվում:

ՆՐԲԱՄԱՋ ՎՈՉԽԱՐՆԵՐ:

Նրբամազ վոչխարների շարքերն են պատկանում միլիկոսները, վորոնք շատ տարածված են Խորհրդալին Միուխյան ալլ հանրապետությունների մեջ, ուստի այդ տեսակի բնութագրի հետ ծանոթանալը անհրաժեշտ է, առավել ևս,

վոր այդ տեսակի վոչխարի տարածումը, մեզ մոտ Հայաստանում, շատ հնարավոր է՝ մեր վոչխարների բրդատվութիւնը լավացնելու համար:

Հայաստանի սահմաններում «Ալագյոզ» խորհրդային տնտեսութեան մեջ, այդ վոչխարների մի փոքր հոտ կա և նրանց վրա վորոշ աշխատանք ե տարվում նրանց մեզ մոտ պահելու նպատակահարմարութեան և ոգտագործման խմատով. վորպէս մեր վոչխարներին ազնվացնողներին: Հենց վոր համապատասխան ճշտված արդյունք ստացվի՝ մեր վոչխարները մերինոսներով ազնվացնելու միջոցներ կձեռնարկվեն:

Մերինոսների ծագումը իսպանական ե, վորտեղից նրանք ընկել են Ֆրանսիա և Գերմանիա, իսկ հետագայում մեզ մոտ՝ նախկին Ռուսաստանը, այժմ Խորհրդային Միութիւն: Ֆրանսիայում մերինոսների վրա աշխատանք եր տարվում նրանց կենդանի քաշը ավելացնելու ուղղութեամբ՝ մեծ քանակութեամբ միս ստանալու համար: Հենց այս ճանապարհով ել առաջացավ մերինոս — բամբուկյե առանձին տիպը: Բամբուկյեի խոյերը կշռում են մինչև 100 կիլոգրամ, իսկ վոչխարները մինչև 65 կիլոգրամ, վոչխարից բուրդ ստացվում ե մինչև 6 կիլոգրամ, իսկ խոյից մինչև 8 կիլոգրամ,

Գերմանիայում ընտրութեան միջոցով ստա-

ցան մեծ քանակութեամբ նուրբ բուրդ տվող մերինոսայան վոչխարներ, որանք կոչվում եյին ելեքտորալ: Բայց մերինոսների այս տիպը շատ փոքր եր, ունեւր փոքր կենդանի քաշ, հետեւապէս քիչ միս եր տալիս: Հետագայում ընտրութեան միջոցով զարգացավ մերինոսայան վոչխարների մի այլ բրդատու տիպ — Նեգրետտի:


Այս տեսակի վոչխարները նշանավոր եյին նրանով, վոր նրանց մարմնի ամբողջ մոթին խոշոր ծալքեր եր գոյացնում, սկսած գլխից և մինչև հետույքը և այդ ծալքերը ամբողջովին ծածկված եյին բրդով. այսպիսով բուրդ շատ եր ստացվում: Մի վոչխարից ստացվում եր մինչև 8 կիլոգրամ բուրդ, իսկ խոյից մինչև 12 կիլոգրամ:

Ֆրանսիայում վոչխարի մսի պահանջը ավելանալու և արժեքը բարձրանալու հետեանքով սկսեցին իրենց նրբամազ վոչխարների բրդի նրբութեան և քանակի հաշվին ավելացնել մսի քանակը: Այդ իրագործելու համար իրենց նրբամազ Բամբուկյե տեսակի վոչխարը սկսեցին բեղմնավորել Անգլիական մատուռ վոչխարների հետ և այդպիսով ստացվեց մի նոր տեսակ շուտա հաս, մսոտ ու լավ բուրդ տվող վոչխար — Պրեկոս:

Մի վոչխարից ստացվում ե 8-10 կիլո բուրդ:

Ռուս վոչխարաբույծների ջանքերով հաջող-
վեց ստանալ մերինոսների ալլ տիպ—Խնֆանդա
դո, մորթու ծալքերի քանակությունը պակա-
սացնելու միջոցով և բրդի քանակն ու լերկարու-
թյունը ավելացնելով ի հաշիվ բրդի նրբության և
խտության, մարմնի չափերի և կազմվածքի ամ-
րությունն ավելացնելու միջոցով:

Վոչխարի կենդանի քաշն է 48 - 55 կիլոգրամ,
իսկ խոյինը 55-65 կիլոգրամ: Մի վոչխարի բրդի
քանակը հասնում էր 5-կիլոգրամի: Մերինոսների
այդ տիպը պահանջկոտ չէր դեպի խնամքը և
կերը, ուստի և նա շատ տարածվեց:



Նկ. 5 Մերինոսյան վոչխար

ՄՈՐԹԱՎՈՐ (смыка) ԿԱԹՆԱԲԵՐ ՎՈՉԽԱՐՆԵՐ

Մորթավոր—կաթնաբեր(ճարպապուշ)վոչխար-
ներին են պատկանում Կարակուլյան վոչխար-
ները, վորոնք տալիս են ամբողջ աշխարհում
հայտնի Կարակուլյան մորթիները:

Այս տեսակի վոչխարները պատկանում են
ճարպապուշերի շարքին աֆս պատճառով, վոր
ճարպը, գլխավորապես, կապում է պուշի վերի
մասում՝ մոտ մեկ կիլոգրամ քանակությամբ:
Այս տեսակի վոչխարների գույնը սև է, հազվա-
գյուտ դեպքում մուգ գորշագույն, ընդ վորում
սև գույնը պահպանվում է $1\frac{1}{2}$ —2 տարի, և աֆսու-
հետև սկսում է ճերմակել և միայն գլուխն ու
վոտքերը սև են մնում:

Այս վոչխարները առանձնապես խոշոր չեն:
Խոյերը կշռում են 40-45 կիլո, իսկ վոչխար-
ները 32-40 կիլո: Ամեն մի անգամվա խուզ-
վածքին տալիս են մոտ 3 կիլո, իսկ խոյը 5
կիլո բուրդ՝ շատ վատ հատկության, վորը, գըլ-
խավորապես, գործադրվում է թաղիք և կոպիտ
գործվածքներ պատրաստելու համար: Կարակուլ-
յան վոչխարի հարյրենիքում (Բուխարա) նրանց
կթում են որակյան լեռկու անգամ և 4-5 ամսվա
ընթացքում տալիս են 32-40 կիլո կաթ: Կարա-
կուլյան վոչխարը միայն տալիս է վոչ մեծ

քանակությամբ, բայց նա հյուսթայի լե, համեղ և ինչ վոր յուրահասուկ համ ունի:



Նկ 6. Կարակուլյան վոչխար:

Կարակուլյան վոչխարներին պահում են համարյա բացառապես թանգարժեք մորթի ստանալու համար: Սրա շնորհիվ ամեն տարի Բուխարայից ահագին քանակությամբ ցեղական խուլեր են արտահանում յեվրոպական շատ յերկրներ՝ տեղական վոչխարներ ազնվացնելու համար:

Մորթու վորակը վորոշվում է խոպոպների ձևով և չափադի գույնով (ցուլքով):

Մորթիները լինում են նախ նորմալ, հանված ծնված գառներից՝ ծնվելուց 1-3 օր հետո, ապա մորթիներ՝ վոր ստացվում են, վոչ թե ծնված գառներից, այլ հանված են սասկած կամ մորթված մոր արգանդից և, վերջապես, կարակուլա,

վոր ստացվում է որապակաս ծնված գառներից:

Կարակուլների մեախսացումը տեղական ուսական կոշտերով վոչխարների հետ՝ հիանալի հետևանք տվեց — շատ լավ մորթիներ ստացվեցին Այս հանգամանքը կարծել է տալիս, վոր հարավօր է մեր տեղական վոչխարների մորթիների վորակը լավացնելու համար կարակուլյան խոլերի գործադրությունը:

Կարակուլյան մորթիների մեծ պահանջը, նրանց բարձր արժեքը, կլիմայական պայմաններին համեմատաբար լավ հարմարվելու ընդունակությունը, պահանջկոտ չլինելը դեպի կերը և պահվածքի ու խնամքի պայմանները, նրանց պետքականությունը բազմակողմանի ոգտագործման համար մորթի, բուրդ, կաթ ստանալը, և վերջապես նրանց լավ պտղաբերությունը (մինչև 40 տոկոս յերկվորյակներ են ծնում) չափազանց մեծ հետաքրքրություն են առաջացնում դեպի այդ տեսակը և անհրաժեշտություն է ծագում վորձեր կազմակերպելու մեր խորհրդային և կոլեկտիվ անտեսություններում և պարզելու նրանց պետքականությունը մեր պայմաններում: Այս առաջանակարգ խնդրի լուծումը չպիտի հապաղի:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՎՈՉԽԱՐՆԵՐ

Անգլիական վոչխարները սովորաբար կոչվում են մսային, կամ մսա—բրդային: Այս վոչխարները շափազանց վաղահաս են, ախլինքն արագ աճում են, լավ գիրանում են և հրաշալի միս են տալիս: Հասարակ վոչխարների և անգլիական խոյերի խաչաձևումից ստացվում են բավականին խոշոր վոչխարներ, վորոնք նույնպես արագ են աճում, տալիս են քնքուշ, հյութալի միս և շատ բուրդ:

Անգլիական վոչխարները յերկու տեսակ են՝ կարճամազ և յերկարամազ:


ԿԱՐՃԱՄԱՋ ՎՈՉԽԱՐՆԵՐ

1. ՍԱՌԻՏԻՍՈՒՆՅԱՆ ՏԵՍԱԿ.—Անգլիական կարճամազ վոչխարներից ամենափոքր տեսակը սառուտգառնյանն է: Ույը կշռում է 70-85 կիլոգրամ, վոչխարը 56-64 կիլոբուրդ տալիս են միայն 3 կիլոգրամ: Այս տեսասակի վոչխարները շատ վաղահաս են: Յեռամսյա գառը կշռում է 16 կիլոգրամից ավելի: Լավ գիրանում են: (Հաղանում են).—

ՇՐՈՆՇԵՐ ՏԵՍԱԿ.—Շրոնշիք տեսակի վոչխարը մի քիչ խոշոր է սառուտգառնյանից, Ույերը կշռում են 80-96 կիլո, վոչխարները՝ 64-77 կիլոգրամ մի վոչխարից ստացվում է 3-4 կիլոբուրդ: Շրոնշիքները նույնպես վաղահաս են,



Նկ. 7. Սառուտգառնյան վոչխար:
բ ս յ ց ա յ ո Վ ՚ ո ս յ ա ի չ ՚ ո ա ճ ու մ, ի ն չ վ ե ս ս ա ու տ
գ ա ու լ ն յ ա ն ն եր ը:



Նկ. 8. Շրոնշիք վոչխարը:

ԳԵՄՊՇԻՐ ՏԵՍԱԿԸ. Գեմպշիւրները բաժան-
կանին խոշոր վոչխարներ են: Խոյերը կշռում են
100-120 կիլոգրամ, իսկ վոչխարները 72-84 կիլո-
գրամ, նրանք վաղահաս են և լավ գիրանում են:
Գեմպշիւրների բուրդը կարճ է, բայց խիտ: Վոչ-
խարնից 3 կիլոյից ավելի բուրդ են խուզում:



Նկ. 9. Գեմպշիւր վոչխար:

ՈՐՅԱՆՈՐԴՇԻՐ ՏԵՍԱԿԸ. Անգլիական կար-
ճամազ վոչխարներից ամենախոշորը ռքսֆորդ-
շիւրներն են: Խոյը կշռում է մինչև 128 կիլո,
իսկ վոչխարը 112 կիլո: Ոքսֆորդշիւրի բուրդը
խիտ և փաղուն է: Մի խուզվածքին ռքսֆորդշիւրից
ստացվում է մինչև 5 կիլո բուրդ:



Նկ. 10. Ոքսֆորդշիւրյան վոչխար:

ՅԵՐԿԱՐԱՍԱԶ ՎՈՉԽԱՐՆԵՐ

ԼԵՅՍՏԵՐ ՏԵՍԱԿ. Անգլիական յերկարա-
մազ վոչխարների մեջ Լեյստերը ամենափոքր
վոչխարն է: Խոյի քաշն է 88-93 կիլո, վոչխա-
րինը—72-80 կիլո: Լեյստերի բուրդը բաժանա-
նին յերկար է և նստած է գեղեցիկ խողովանե-
րով: Մի վոչխարից խուզում են 4-5 կիլո բուրդ:
ԼԻՆԿՈՂՆ ՏԵՍԱԿ.— Լինկոլնները տեսքով
նման են Լեյստերներին, բայց նրանք խոշոր են:
Լինկոլնի խոյերը կշռում են մինչև 120 կիլո,
վոչխարը—96 կիլո: Լինկոլնի բուրդը սպիտակ
է, կապտավուն, բայց ամուր և փաղուն: Վոչ-
խարից մինչև 6 կիլո բուրդ են խուզում:

ՎՈՅԽԱՐՆԵՐԻ ԲՈՒԾՈՒՄԸ

Վոչխարների ազնվացման հասնում են մի շարք միջոցներով, իսկ գլխավոր միջոցներից մեկը հոտի համար ցեղական արտադրողների ընտրությունն է։ Այս գործում լերկու ուղղություն կարող է լինել, այն է՝ լերք ցեղական խոյը վերցնում են նույն տեսակից, ինչ վոր վոչխարն է, կամ, լերք վերցնում են բոլորովին այլ տեսակի խոյ և սրանցով են ուղղում ազնվացնել։

Վոչխարների ազնվացման առաջին գեղքը կոչվում է ազնվացում «իւր մեջ», իսկ լերկորդը — ազնվացում «խաչաձևումով»։ Ընդհանրապես պետք է ասել, վոր «խաչաձևման» մեթոդով ոգտորվելը, այսինքն ուրիշ տեսակի արյուններարկելը, վորպեսզի տեղական վոչխարների մեջ սրտցընել այն հատկությունները, վոր նրանք չունեն, բայց վորոնց ներկայությունը համարվում է ցանկալի, պիտի համարվի շատ լուրջ խնդիր և պիտի շատ շրջահայաց և զգուշ լինել։

Այսպիսի նախազգուշացումը կատարվում է այն պատճառով, վոր ներարկելով չուսումնասիրված, չփորձած տեսակի արյունը, մեծ մասամբ, մենք կարող ենք լավ հատկությունների մոցնելու հետ միասին՝ մոցնել նաև անցանկալի հատկություններ և ընդհանրապես շատ վատ վոչ-

խարներ, լերքեմն մինչև անգամ ավելի վատերը, քան մեր տեղականը։

Որոհրդային և խոլեկտիվ տնտեսությունները վորոշելով այս մեթոդով ազնվացնել իրենց վոչխարները, այսինքն ոտար արյան պատվաստումով, և ձեռք բերելով այլ տեսակի խոյեր՝ պետք է հաշվի առնեն այս բոլոր մոմենտները, և քանի դեռ նրանք ճիշտ տեղեկություն չեն ունենա խոյի հատկությունների և տեղական վոչխարների ու ընտրած տեսակի խաչաձևման դրակա արդյունքների մասին՝ պետք է հետ կանգնեն այդպիսի քայլից, քանի վոր ոգուտի փոխարեն կարող է փլաս՝ վատ ցեղ ստացվել։

Մյուս լեղանակը — «իւր մեջ» ազնվացնելու լեղանակը ճիշտ է շատ լերկար ճանապարհ է, պաճանջում է մեծ ջանք ու աշխատանք, բայց ավելի ստույգ ճամապարհ է և մեծ մասամբ ավելի արդյունավետ։

Այս լեղանակը հիմնված է այն բանի վրա, վոր ամեն տեսակի մեջ, ինչպես այդ մասին ասել ենք, կան անասուններ, վորոնք աչքի չեն ընկնում իրենց լավ հատկություններով, և ընդհակառակը՝ պատահում են շատ վատերը։

Մեր կաթնարեր տեսակի վոչխարների մեջ (Մաղեխ, Բալբաս, Ղարաբաղ) անպայման կան

առանձին որինակներ մեծ կաթնաբերությամբ, Բալբաս և Բոգախ վոչխարների մեջ կան մեծ բրդատվությամբ անասուններ և ընդհակառակ՝ հենց նույն վոչխարների մեջ կան անասուններ վատ կաթնաբերությամբ և բրդատվությամբ: Յեթե մենք սկսենք ցեղի համար ընտրել գառներ բացառապես լավ վոչխարներից — բարձր կաթնաբերությամբ, բարձր բրդատվությամբ և նրանց խնամել ու զարգացնել բնական ե, վոր վոչխարները աստիճանաբար կսկսեն լավանալ, այլինքն, կբարձրացնեն իրենց արդունա վետությունը:

ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ՎՈՉԽԱՐԻ ՏԱՐԻՔԸ ԱՏԱՄՆԵՐՈՎ:

Իհարկե վոչխարի տարիքի վորոշման ամենանա- ուղիղ ճանապարհը անտեսության մեջ պահվող գրանցումներն են լերը և ծնվել տվյալ անա- տունը: Բայց այսպիսի գրանցումներ չունե- նալու դեպքում՝ վոչխարի հասակը կարելի չե վորոշել ներքին ծնոտի կտրիչների (առջևի ատամներ) քանակությունից և մաշվածությու- նից: Անհրաժեշտ ե նշել, վոր վոչխարները վերին ծնոտի կտրիչներ չունեն:

Մինչև մի տարեկան հասակը վոչխարի կը- տրիչները մանր կաթնատամ են:



1 տարի



Նո. 11, 12, 13,

1 1/2 տարի



2 1/2 տարի

Մի տարին լրանալիս կտրիչների առաջին զույգը գալիս ե փո- խարինելու բնկնողներին: Յերկու և կես տարեկանին մոտ հայտնվում ե կտրիչների յեր- րորդ զույգը (մշտական):



3 1/2 տարի



4 1/2 տարի

Յերեք և կես տարեկանին մոտ հայտնվում ե կտրիչների յերրորդ զույգը (մշտական): Չորս և կես տարուն մոտ հայտնվում ե կտրիչներ չորրորդ զույգը:

Վոչխարի հետագա տարիքն արդեն վորոշ-
վում է ատամների մաշվածության աստիճանով.
բայց վորովհետև վոչխարները սովորաբար 7-8
տարուց ավելի չեն պահում, այդ պատճառով
հասակի ավելի ճիշտ վորոշումը այդ շրջանում
առանձին նշանակություն չունի:

ՁՈՒԳԱՎՈՐՈՒՄ

Յերեք տեսակ զուգավորում գոյություն
ունի՝ ձեռնասուն, խմբային և ազատ: Ձեռնա-
սուն զուգավորումն այն է, վոր խոյերին ա-
ռանձին են պահում, ցանկության յեկած մաքի-
ներին ջոկում և թողնում են նրանց համար
նշանակված խոյերի մոտ:

Խմբային զուգավորումն այն է, վոր զու-
գավորման սեզոնին, հոտը՝ մաքիների թվի և
կազմի համեմատ, բաժանում են խմբերի: Ամեն
խմբի մեջ բաց են թողնում համապատասխան
խոյին, վորը մաքիների հետ ման է գալիս և
նրանց մեջ ցանկություն առաջանալիս՝ ծած-
կում է:

Վերջապես ազատ զուգավորումը նա չէ, վոր
խոյերը ման են գալիս հոտի մեջ՝ մաքիների
հետ միասին և ըստ կարիքի ծածկում են նր-
անց:

Մեր խորհրդային և կոլեկտիվ տնտեսու-
թույններին, իհարկե, կարող ենք հաճախաբար բա-
ցառապես ձեռնասուն զուգավորումը, վորովհետև
միայն այս պայմաններում կարող ենք դրակա-
նապես ասել գառի ծագման մասին և ընտրու-
թյուն կատարել ըստ արդյունավետության: Մի-
այն այս պայմաններում կհաջողվի կանոնավո-
րել զուգավորումը և ավելի բացիոնալ կերպով
ոգտագործել խոյին, վորպես արտադրողի: Հենց
կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններն են,
վոր կարող են զարկ տալ ձեռնասուն զուգա-
վորմանը, սակայն առաջին տարիներին չեթե-
անհնարին լինի կազմակերպել ձեռնասուն զու-
գավորումը, այդ դեպքում պետք է ընտրել
խմբային զուգավորման մեթոդը, վոր գոր-
ծադրվելու չե ժամանակավորապես, մինչ ձեռ-
նասուն զուգավորման անցնելը: Ազատ զուգա-
վորումը վոչ մի դեպքում չպետք է գործադրել
վորովհետև, բացի այն վոր անկարելի չէ վորո-
շել գառի ծագումը, նա հաժապանց հյուծում է
խոյերին և նա, վորպես արտադրող, շուտով ան-
պետքանում է:

Վոչխարը ցեղային նպատակներով կարող է
ծառայել մինչև 10 տարի: Մաքիի ցեղային ծա-
ռայությունն այդ՝ համեմատաբար, լերկար ժա-
մանակամիջոցը պետք է լրիվ ոգտագործել: Մա-

ըինները զուգավորման պիտի գնան վոչ շուտ, քան $1\frac{1}{2}$ տարեկան հասակում: Վաղ զուգավորումը դատարեցնում է զարգագումը և վատ է անդրադառնում սերնդի վրա:

Խոյերը 2 տարեկանից առաջ զուգավորման չպիտի գնան: Խոյի տոհմալին ծառայության լավագույն տարիները պիտի համարել յերրորդը և չորրորդը: Այս ժամանակ նրանք ավելի ու ժեղ և առնական են: Չպետք է թուլ տալ, վոր խոյերը չափից դուրս գիրանան: Այս բանից խուսափելու համար՝ խոյերին չափավոր պիտի կերակրել: Չեռնասուռն զուգավորման ժամանակ, ամեն խոյին կարող է ընկնել 50-60 վոչխար, իսկ խմբային զուգավորման ժամանակ՝ վոչ ավելի 30-40 վոչխարից:

Վոչխարների ցանկությունը սովորաբար հայտնվում է աշնանը՝ հոկտեմբերին-նոյեմբերին: Այդ ժամանակ վոչխարը հուզվում է և կորցնում է ուտելու ակտիվությունը: Նրա ամոթաշուրթերը խիստ ուռչում են և նրանց վրա լորձոնք է լերկում: Ցանկությունը և հոսը, սովորաբար, տևում է 30 ժամ և այդ ժամանակ վոչխարը պիտի ծածկվի: Յեթե այդ ժամանակամիջոցում վոչխարը չծածկվի— զուգավորվի, այն ժամանակ հոսը և ցանկությունը նորից հայտնվում են 2-3 շաբթից հետո, և յեթե այս ժամանակ էլ չգու-

գավորվի, այն դեպքում վոչխարը կարող է մընալ ամուլ, վորովհետև ձմեռը վրա կը կհասնի և նրա ցանկությունը կմարի: Վորպեսզի վոչխարները ամուլ չմնան, իսկ այս շատ վնասաբեր է տնտեսության համար, պետք է ուշադիր հետամուտ լինել նրա ցանկությանը և զուգավորել նրան:

ԻՆՉՊԵՍ ՆՇԱՆ ԱՆԵԼ ԶՈՒՊԱՐՈՐՎԱԾ ՎՈՉԽԱՐ-ՆԵՐԻՆ

Խորհրդային և կողեկտիվ տնտեսությունների համար շահավետ է գիտենալ, թե վոր վոչխարն է զուգավորված և վորը ամուլ: Չեռնասուռն զուգավորման ժամանակ դա շատ հեշտ է իմանալ, վորովհետև այս դեպքում, տնտեսության մեջ զբանցում է կստարվում զուգավորման մասին:

Խմբային և ազատ զուգավորման ժամանակ խոյերը շրջում են ընդհանուր հոռի մեջ և միանգամայն անհնարին է հետամտել, թե չէրբ վոր վոչխարը զուգավորվեց: Չափազանց անհրաժեշտ է գիտենալ, թե վոր վոչխարն է ամուլ րաժեշտ է գիտենալ, թե վոր վոչխարն է ամուլ ամացել, վորովհետև հոռի խոտանելու (браковать) ժամանակ այս գոծոնը նկատի պիտի առնվի:

Խմբային և ազատ զուգավորման ժամանակ էլ կարելի չե նշան անել, թե՛ վոր վոչխար-

ըը, յերբ գուգավորվեց, գործադրվելով այդ նը-
պատակի համար հոտի մեջ գուգավորված վոչ-
խարին նշան անեւու չափագանց հեշտ միջոցը:

Ամեն ոք խոյին հոտը թողնելուց առաջ,
պետք է նրա առաջին վոտքերի արանքին կրծ-
քի վրա ներկ քսել: Խնարկե պետք է այնպիսի
ներկ վերցնել, վոր բրդի հատկութիւնը չփչա-
նաւ: Այս ներկը հետք է թողնում ծածկված
վոչխարի հետուքին: Հովիվը նշանակում է իր
մոտ և ամեն իրիկուն հաղորդում է խորհրդա-
լին կամ կոլլեկտիվ տնտեսութեանը:

ՀՈՏԻ ՄԵՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Մեր մոտ սովորաբար, հոտն են թողնում
առաջին պատահած խոյին, միայն թե նա ծած-
կի մաքրներին: Ինչ հատկութիւն ունի այդ
խոյը, ինչպիսի սերունդ կստացվի նրանից՝ հա-
մարյա չենք հետաքրքրվում: Պետք է լավ գիտե-
նալ՝ ինչ վոր սերմն է, այն ել պտուղն է: Վատ
խոյից վատ ել սերունդ կստացվի: Տոհմի հա-
մար պետք է ընտրել միայն լավագույն և լի-
վին հասունացած խոյեր: Նա պետք է ունենա
կանոնավոր կազմվածք և բավականաչափ խոշոր
հասակ: Ընտրվող խոյը անհատապես լավը պետք
է լինի և նրա մեջ ցեղի հատկանիշները պիտի

արտահայտված լինեն բավականաչափ ուժեղ: Յե-
թե մենք հետամուտ ենք բուծելու կաթնա-բրդ-
ային ուղղութեան վոչխարներ՝ նա պիտի լինի
կաթնաբեր մորից և նրա բուրդը պիտի լինի
լերկար, խիտ և սրա հետ միասին՝ միատեսակ:

Վարովհետեւ խոյի արժեքավորութիւնը կա-
յանում է նրանում, վոր նա լավ սերունդ է
տալիս, հետեւապես ցանկայի յե, վոր նա հատ-
կանիշները ժառանգաբար հաղորդելու ընդունա-
կութիւն ունենա և այս հատկութիւնը պիտի
պարզված լինի գուգավորման գնացող ամեն
խոյի համար:

Այս աստիճան արժեքավոր հատկութիւննե-
րը հաստատելու համար, խոյին թուլ, են տալիս
առաջին տարին ծածկել, վոչխարների չափ սահ-
մանափակ քանակութիւն և լավ հսկել ստաց-
ված սերնդին:

Խոյի մասին բոլոր ասածը վերաբերում
նաեւ վոչխարին: Հոտի մեջ պետք է թողնել
կաթնաբեր և բրդատու ծնողներից առաջացած
վոչխարներին, և վոր ինքն ել ոժտված լինի լավ
կաթնաբերութեամբ և բրդատութեամբ:

ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ ՆՇԱՆ ԱՆԵԼԸ

Կանոնավոր վոչխարապահութեան համար
խորհրդային տնտեսութիւնը, կամ կոլլեկտիվ
տնտեսութիւնը պարզ պատկերացում պիտի ու-
նենա, թե՛ ինչ է ներկայացնում իրենից, ամեն

մի կենդանի: Այս նպատակով, փոխարեններին և խոյեբին նշան անելով՝ խորհրդալին անտեսություննեբրում և կոլեկտիվ անտեսություննեբրում, պետե գրված լինի փոխարապահության հիմքում:

Վոչխարներին նշան անելը կարելի չե կա-
տարել զանազան ձևերով. բայց ամենապարզ և
մատչելի միջոցը պետք է համարել ահանջներ
կտրվածքը: Սմեն մի կտրվածք պարմանական թվա-
նշան և նշանակում:



ՆԿ, 16. Ահանջների կտրված-
քով վոչխարի գլուխը:

Զախ աղանջի ներքեկի յեզրի կտրվածք	1
Այ աղանջի ներքեկի յեզրի կտրվածք	10
Զախ աղանջի վերևի յեզրի կտրվածք	3
Այ աղանջի վերևի յեզրի կտրվածք	30



Նկ. 17. Կտրվածքի համար դրժիք:

Ձախ ականջի	ծայրի	կտրվածք	100
Սջ ականջի	»	»	200
Ձախ ականջի	կլոր	կտրվածք մեջտեղում	400
Սջ ականջի	»	»	800

Կամ հաստուկ գործիքով համարակալել ակահնջի վրա:

ՑԵՂԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

Կենդանու ծագման և արդյունավետութեան
իսկութեանը հաստատելու համար, ցեղային գրան-
ցումների վարումը կարևոր դեր պիտի կատարի
խորհրդային և կոլեկտիվ տնտեսութունների մեջ:
Առանց ցեղային գրանցումների հոտի ընտրանքը
և խոտանքը դժվար է կատարել, առանց ցեղա-
յին գրանցումների դժվար է հոտի համար ար-
տադրող խոյ ընտրել, առանց ցեղային գրանցում-
ների դժվար է հաստատել այս կամ այն կեն-
դանու պահելու նպատակահարմարութիւնը և
վերջապես առանց ցեղային գրանցումների առան-
ձին կենդանիների կանոնավոր խնամքը և կերա-
կրումը՝ դժվար է կազմակերպել, որ. զուգավոր-
ման, կենդանիների հղութեան ժամանակ և այլն:
Այսպիսով մենք նկատում ենք, Վոր բոլոր պայ-
մաններում և ամեն մի նպատակի համար, ցե-
ղային գրանցումներն ահապին նշանակութուն
ունեն:

Իհարկե ցեղական վոչխարապահության ա-
ռանձին մոմենտների համար գոյություն ունեն
գրանցումների վորոշ ձևեր—հոտային մատյան,
զուգավորման մատյան արգյունավետության մատ-
յան, անասնաճի սերնդի մատյան, կերակրման
մատյան և այլն: Բայց մենք նպատակ ենք դնում

մատնանշել այն գրանցումները, վորոնք անհրա-
ժեշտ են սկզբնական շրջանում, լենթադրելով
վոր մեր զոտտեխնիկները ամեն մի առանձին մո-
մենտի համար կտան ընդունված և հաստատված
ձևեր:

Հիմնականում ցեղային գրքերը պիտի մըտ-
նեն՝ կենդանու համարը, սեռը, տեսակը, գույնը,
նշանները, ծագումը (ովքեր են նրա հայրն ու
մայրը և նրանց արդյունավետությունը), հասակը
— ծննդյան տարին, ամիսը և թիվը, զուգավոր-
ման ժամանակը (իսկ խոյերինը՝ քանի և ինչ մա-
քինեք ե ծածկել), գառածնության ժամանակը,
մատղաշների սեռը, նրա մորը ծածկող խոյի հա-
մարը, — տեսակը և հասակը. մոր կաթի և բրդի
արդյունավետությունը:

Տնտեսության մեջ սկզբնական շրջանի հա-
մար այս տեղեկություններն ունենալով՝ կարելի
յե հագեցել բավականին արդյունավետ հոտ. բացի
դրանից տնտեսության մեջ կարելի յե կարգա-
վորել նաև ցեղային աշխատանքը:

II ՎՈՅԽԱՐՆԵՐԻ ԽՆԱՍՔԸ

ՀՂԻ ՎՈՅԽԱՐՆԵՐԻ ԽՆԱՍՔԸ

Վոչխարների հղիության շրջանը տեվում ե
5 ամիս (144—153 օր): Այդպիսի փճփկի մեջ
գտնվելով վոչխարը կարոտ ե ուշադիր վերաբեր-

մունքի և ուժեղացրած խնամքի: Հղի վոչխա-
րին պետք ե պաշտպանել սալջարդից և ճրն-
չումից, մանավանդ արոտ և հետ քշելիս, ալլա-
պես նա կարող ե գառը վիժել: Հղի վոչխարնե-
րին պետք չե քշել մեծ տարածություններ և ա-
բագ: Վոչխարանոցներում, վորտեղ վոչխարներն
են պահվում, պետք ե մաքրություն պահպանել
և հաճախ ողափոխել:

Գառածնությունից առաջ, յեթե միայն հնա-
րավոր ե, (սովխողներում ու կոտնտեսություն-
ներում հնարավորություն իհարկե անպայման
կլինի), լավ ե զատել հղի կենդանիներին մյուս-
ներից և առանձին տեղավորել:

Մսուրը (СТОЙЛО) պետք ե բավականաչափ
տաք լինի և առանց միջանցիկ քամու, բայց հա-
ճախ պետք ե ողի փոփոխություն կատարել:

Գառածնությունից 3—4 օր հետո վոչխարը
բնտելանում ե իր գառին և այն ժամանակ նրան
կարելի յե տեղավորել մյուս ծնած վոչխարների հետ
Յեթե վորեե պատճառով անկարելի յե առանձին գոմ
կամ առանձին տեղ հատկացնել հղի կենդանի-
ներին գառածնությունից առաջ և հարկադրված
են բոլոր վոչխարներին միատեղ պահել, այն ժա-
մանակ այս գոմը պետք ե ընդարձակ լինի, վոր-
պեսզի չխռնվեն խմբերով և չճնշեն միմյանց:

ՎՈՉԽԱՐԻ ԽՆԱՄՔԸ ԳԱՌԱԾՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՐԵՐԻՆ

Գառաձնությունից հետո մի քանի օր պետք է ստուգել վոչխարի կուրծքը, համոզվելու համար, թե՛ վորքան լավ են ծծում գառները կաթը: Յեթե գառը լիովին չի ծծում կաթը՝ անհրաժեշտ է կթել, հակառակ պարագային կրծում մնացած կաթը կթթվի և կրծում հիվանդագին զրուկուն կառաջացնի: Յեթե վոչխարը առատ կաթ ունի՝ առաջին 3—4 օրը պիտի կերակրել միայն խոտով: Հատիկավին կերը, կամ թեփը վորպես լրացուցիչ կեր, պետք է տալ թույլ վոչխարներին գառաձնությունից հետո:

Գառաձնությունից հետո վոչխարը, սովորաբար, ուժեղ ծարավ է զգում. ուրեմն այդ ժամանակ նրան պետք է տալ մաքուր, թարմ, բայց վոչ սառը ջուր:

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Վոչխարների ձմեռային խնամքը կայանում է նրանում, վոր նրանք ժամանակին և կանոնավոր ստանան կերը և խմելիքը: Կերը պետք է լինի լավորակ, վոչխարները ամենօրյա զբոսանք պիտի ունենան, ողբ վոչխարանոցում պետք է մաքուր լինի. պետք է պալքարել միջատների և

մակաբույծների դեմ և նախագգուշական (профилоктический) միջոցներ պետք է ձեռք առնել հիվանդությունների դեմ: Պետք է հակել գոմի մաքրությանը և ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է նրան ախտահանել. — սպիտակեցնել պատերը թարմ կրաչին լուծույթով և հատակն ու առաստաղը ծածկել նույն լուծույթով:

Վորևե հիվանդություն չերևալու դեպքում՝ այդ մասին պետք է հայտնել մոտակա անասնաբույժին:

Վ չխարների ամառային խնամքը ավելի հեշտ է: Արոտի պիտի թողնել աստիճանաբար՝ առաջին օրը թողնել 2—3 ժամ, և աստիճանաբար յերկարացնել արոտի ժամանակը:

Թաց և խոնավ արոտատեղերում չի կարելի արածացնել վոչխարներին: Մեծերին և ցուրտ քամոտ յեղանակին գառներին չի կարելի արոտատեղ թողնել:

Կաղ և վոչ վարակիչ հիվանդներից պիտի կազմել առանձին հոտ և առանձին արածացնել ամենամոտ արոտատեղում:

Արածացնելու ժամանակ վոչխարներին՝ ըստ սեռի և հասակի, պետք է բաժանել առանձին հոտերի և ամեն մի հոտը առանձին արածացնել:

Միանգամայն անթուլլատելի չե վոչխարներին խոշոր յեղջուրավոր անասունների և խոզերի հետ արածացնելը:

ՅԵՂԱՅԻՆ ԽՈՅԻ ԽՆԱՍՔԸ

Վոչխարների զուգավորման ժամանակ՝ խոյի ուժեքը պիտի պահպանել. չպետք է թուլլ տալ խոյին ծածկելու մեծ քանակութիւնով վոչխարների. սա առաջացնում է խոյի արագ հյուսթում: Զի կարելի թուլլ տալ նույնպէս, վոր խոյը որվա ընթացքում մի քանի վոչխար ծածկի: Յեղալին խոյը կոր տարին պիտի լինի մարմնեղ, բայց պետք է հսկել, չգիբանա, վորովհետև գիրացած խոյը վաղ արտադրող է: Շատ ավելի լավ է ցեղային խոյին ոգտագործել ձեռնասուն զուգավորումը գործադրելով: Յեթե այս անկարելի յե՝ անհրաժեշտ է կարգավորել զուգավորումը և տալ նրա հասակին համապատասխան անհրաժեշտ քանակի մաքիներ:

III. ՎՈՇԽԱՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Վոչխարների արդյունավետութիւնը (կաթը, բուրդը և միսը) ավելացնելու համար — անհրաժեշտ է հոգ տանել վոչխարների և մանավանդ, մատաղ սերնդի լավ կերակրելու մասին:

Գառների կերը լավացնելու դեպքում՝ սրանք սկսում են ավելի լավ և արագ աճել և զարգանալ, հետագայում ել նրանցից լավ վոչխարներ և խոյեր են ստացվում:

Վոչխարներին կերակրելու համար կարելի յե ոգտագործել բազմազան կերեր, ուստի նրանց մասին ասենք առանձին-առանձին:

ԿՈՇՏ ԿԵՐԵՐ

ԽՈՏ: Բոլոր կոշտ կերերից խոտը ամենամանդարարն է: Վոչխարները ավելի լավ և ախորժակով ուտում են անջրդի տեղերի (դռերի) մանրախոտը, հոտավետ, դառը և բարձմենակի խառնուրդով խոտերը: Յանովի խոտերից վոչխարները ախորժակով ուտում են յերեքնուկը, առվուկտը և լորնգանը:

ՀԱՐԴ (դարման): Աշնանացանի հարդը վոչխարների համար համեմատաբար լավ կեր է: Որինակ պետք է տալ վոչ ավել, քան 200 գրամ: Լավ է տալ յեռացրած ջրով թրջելուց հետո:

ՀԱՏԻԿԱՅԻՆ ԿԵՐԵՐ

Հատիկային կերերը իրենց բաղադրութիւնով ատ անդարար են, այս պատճառով նրանք կոշվում են ուժեղ կերեր: Հատիկային կերերը վոչխարներին տրվում են, վորպէս լրացուցիչ կոշտ կերերին: Վոչխարներին տալիս են հետևալ հատիկային կերեր:

ՎԱՐՍԱԿ, Զուգավորման շրջանում խոյերի համար հրաշալի կեր է: Նա ամբապնդում է

նրանց սեռական եներգիան: Գառներին տալուց՝ նպաստում է նրանց արագ և կանոնավոր աճեցողությանը: Վարսակը տրվում է ջարդած դրությամբ, խառն յեռման ջրով թրջած դարմանի հետ միասին:

ԳԱՐԻ: Տրվում է գլխավորապես վոչխարներին գերացնելու ժամանակ: Տալիս են մանր ջարդած դրությամբ, ցանելով ճակնդեղի կամ ալլ արմատապտուղների վրա որական մինչև 400 գրամ:

ՍԵՄԻՆԴՐ: Վոչխարների համար կարող է ծառայել, վորպես կեր: Բայց, վորովհետև չոր հատիկը շատ պինդ է և վատ է ծամվում, ուստի, սովորաբար, տալուց առաջ, նախորոք ջարդելով, թրջում են ջրի մեջ: Լավ է աղաջրում: Որական տալիս են մոտ 400 գրամ:

ԿՈՊՏՈՆ: Վոչխարներին, վորպես կեր գործադրվում է՝ կտավհատի, արևածաղիկի, վուշի և բամբակի կողտոն: Տրվում է որական կթվող վոչխարներին կես կիլոգրամ: Գործածութունից առաջ լավ է ջրով թրջել: Կթվող վոչխարները կողտոնից կաթն ավելացնում են:

ԹԵՓ: Ամենալավ թեփը ցորենինն է, ապա՝ հաճարինը: Վոչխարներին և մատղաշներին որական տալիս են 400 գրամ: Թեփ տալուց վոչխարները կաթն ավելացնում են: Թեփը սովորաբար ցանում են հյութալի կերի, կամ յեռման ջրով թրջած դարմանի վրա:

ՀՅՈՒԹԱԼԻ ԿԵՐԵՐ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐ: Գետնախնձորը լավ է տալ յեփած, կես կիլոգրամից վոչ ավել որական: Փտած, ծլած և սառած գետնախնձոր չպետք է տալ: Ծլած գետնախնձորը փորլուծութուն, և, մինչև անգամ, հղի (ծանրած) վոչխարի վիժում է առաջացնում (գառնատում): Գիրացնելու ժամանակ կարելի չէ տալ մինչև 2 կիլոգրամ, բայց միայն, բացառապես, յեփած դրությամբ: Գառներին գետնախնձոր չպետք է տալ: Գետնախնձոր կարելի չէ տալ մանրած դրությամբ՝ կոշտ կերերի հետ միասին, և գլխավորապես, յեռման ջրով թրջած դարմանի հետ:

ԿԵՐԻ ՃԱԿՆԴԵՂ: Կերի ճակնդեղը շատ լավ կեր է վոչխարներին համար: Հիանալի ներգործում է մորսողականի վրա և ձմեռը լիովին փոխարինում է արոտի կանաչ կերին: Վոչխարներին կարելի չէ տալ որական մինչև յերկու կիլոգրամ: Ճակնդեղը կարելի չէ հում տալ, բայց տալուց առաջ պետք է մանրել և տալ կոշտ կերակրի հետ միասին:

ԿԵՐԻ ԳԱԶԱՐ: Նույնպես հիանալի կեր է, մանավանդ գառների համար: Չափահաս վոչխարին կարելի չէ տալ մինչև յերկու կիլոգրամ որական: Շաղգամ (турнепс) լավ կեր է գերացող վոչ-

խարհերի համար և կերի որական չափը կարելի է հասցնել չորս կիլոյի:

ՍԻՆՈՍԱՑՐԱԾ ԿԵՐ: Բոլոր այլ հյութալի կերերի համեմատությամբ, սիլոսը, վորպես հյութալի կեր, ամենաքիչ պետքականն է վոչխարներին կերակրելու համար:

Բայց վորևե հյութալի կերերի բացակայությունը գեպընդ, վոչխարի ամեն մի գլխին կարելի է տալ որական վոչ ավել մի կիլոյից: Ծանրացած վոչխարներին՝ հղիության վերջին ամսին, և գառներին սիլոս չպետք է տալ:

ՎՈՋԽԱՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՇԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ամեն մի տնտեսատեր, առավել ևս կոլխոգային և խորհրդային տնտեսություն աշխատավոր, պետք է գիտենա, վոր չի կարելի անասուններեն կերակրել աչքի չափով՝ անհաշիվ և անկշիռ: Բայի կերերի առկայությունը՝ անհրաժեշտ են անասուններին կերակրելու մի շարք գիտելիքներ, վորոնք անասունների տարբեր տրտադրանքի և կենդանի քաշի նկատմամբ, տարբեր կերերի որական չափի ուղեցույց պիտի լինեն: Ուրիշ խոսքով անհրաժեշտ են վոչխարներին կերակրելու վորոշ նորմաներ:

Անասունների, ինչպես նաև վոչխարների

կերակրումը, համապատասխան նրանց կենդանի քաշի և կիթի՝ կոչվում է կանոնավոր (ընդհանուր) կերակրում, կամ կերակրում նորմաներով:

Վոչխարների որաքաժինը կանոնավոր կազմելու համար, մեզ անհրաժեշտ է իմանալ, թե՛ ինչ քանակությամբ կեր է հարկավոր զանազան քաշի վոչխարների առողջ կենցաղավարության համար և ինչ քանակի կեր է պահանջվում վորոշ քանակություն կաթ կամ բուրդ ստանալու համար:

Կերի այն մասը, վոր անհրաժեշտ է վոչխարին նրա առողջ գոյությունը պահպանելու համար՝ կոչվում է կենսական կեր: Այն կերը, վոր անհրաժեշտ է կաթ, բուրդ կազմելու համար՝ կոչվում է արտադրական կեր:

Կենսական կերի քանակը վորոշվում է կենդանի քաշի, իսկ արտադրական կերինը՝ վոչխարի որական կաթի քանակի համապատասխան:

Արտադրական կերի անհրաժեշտ քանակությունը, գլխավորապես կազմում է ուժեղ կերերից կամ, արմատապտուղներից, իսկ այն կերը վորը գնում է կյանքը պահպանելու համար, կազմվում է, համարյա բացառապես կոշտ կերերից:

Ըստ վոչխարի խոշորության հանձնարար-

վում ե կենսական կերի հետեւյալ միավորները.

Վոչխարի կենդանի քաշը 32 կգ. 1¹/₄ կերի միավոր

48 $I^{1/2}$

D D D 64 D 13/4 D D

D D D 80 D 2 D D

Ամեն 800 զբամ կաթ կաղմելու համար մեկ
կերի միավոր արտադրական կեր պետք է տալ:

ԻՆՉ ԿՆՇԱՆԱԿԻ ԿԵՐԻ ՄԻԱՎՈՐ

Ինչպես հայտնի է բոլոր կերերը միատես-
սակամանդարարու թյուն հունեն: Մի կիլոգրամ վար-
սակը ընդունված է համարել, փորպես սահմանած
կերի միավոր, առանձին կերի սննդարու թյան հա-
մեմատու թյան համար:

Գործնական փորձերի հիման վրա հաստատված է, վոր մի կիրգրամ վարսակը, մոտավորապես, ունի հույնալիսի սնդարար ուժ, ինչպես և մեր մոտ գործադրվող կերերի հետեւյալ քանակութունը՝

1 ԿԻՆՈՂԲԱԺ ՎԱՐՍԱԿԸ 1 ԿԵՐԻ ՏԻԱՎՈՐ

0,8 (800 գրամ) գարին D D D

0,7 (700 գրամ) սիմիլեր Ծ Ծ Ծ

0,8 (800 գրամ) կտավ/հատի կոպտոն D D D

0,8 (800 գրամ) բամբակի կոպտոն » » »

0,9 (900 գրամ) աղեածառիկի կուլտուրն » » »

1.2 (1 կետ 200 դրամ) Թեկե

2—2.5 կամ. մարդու. կողմից. » » »

3—3,5 հարդ (դարման) Ծ Ծ Ծ

2 — լերեք կնուկ, առվույտ, վիկա, կորնդան » »

3,5 — գետնախնձոր

9,0—կերի ճակնդեղ D D D

ԻՆՉՊԵՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐԱԿՐԵԼ - ՎՈՋԻԱՐՆԵՐԻՆ

Վոչխարներին կերակրելու հիմնական կա-
նոնները գիտնալով ց հետո, զժվար չե անցնել
վոչխարներին կերակրման կանոնավոր բացիոնալ
ձևին: Վորովհետև այս գրքուկը նշանակված է
խոշոր վոչխարապահական խորհրդալին և կոլլեկ-
տիվ տնտեսությունների համար, ուր գտնվում
են մեծ քանակությամբ վոչխարներ, և անհնա-
րին կլինի անհատական կերակրումը գործադրել
անմիջապես, այսինքն՝ ամեն վոչխարին առանձին
ներա կենդանի քաշի և արդյունավետության համա-
ձայն կերակրելը, ուստի այդ տնտեսություն-
ները կարող են անցնել առայժմ խմբալին կերա-
կրմանը:

Այս նպատակի համար հոտը պիտի բաժանել խմբերի կենդանի քաշի ու արտադրողականության համաձայն: Այնուհետև ամեն կողմից պետք է գատել ծանրած (հղի), ծնած և ստերջ (չըսըր) վոշխարներին և ամեն մի խմբի համար կազմել կերի նորմաներ՝ համաձայն կերի միավորների, անտեսության մեջ գտնված կերերից:

ԱՐՏԱԴՐՈՂ ԽՈՅԸ, ԻՐ ԿԵՆԴԱՆԻ ՔԱՉԻ ՏԱ-

մաճայն՝ ստանում է կենսական կեր, իսկ գու-
գավորման շրջանում ուժեղ կերի քանակությու-
նը՝ լավ է վարսակ—պետք է ավելացնել և հաս-
ցնել $1\frac{1}{2}$ կիլոյի: Հյութալի կեր և դարման խոյին
չպետք է տալ:

ԾԱՆՐԱԾ ՄԱՅԻՆ, համաճայն իր կենդանի
քաշի՝ պահպանող կեր է ստանում, իսկ գառա-
ծնությունից մի ամիս առաջ, պետք է ավելացնել
100 գրամ ուժեղ կեր, լավ է թեփ—և սա շատ
ոգտակար պիտի համարել պտղի զարգացման
համար: Այս ժամանակ դարման և հյութալի կեր
լավ է չտալ:

ԾՆԱԾ ՄԱՅԻ: Բացի կենսական կերից, վոր
տրվում է նրա կենդանի քաշի համաճայն, պետք
է ավելացնել նաև արդյունավետ կեր, կաթ կազ-
մելու համար: Ամեն մի 800 գրամ կաթ կազ
մելու համար պետք է տալ մի կերի միավոր:

ԱՂ ՏԱԼԸ

Վոչխարի համար աղը կերակրի առհրաժեշտ
բաղադրությունն է: Վոչխարները աղի մեծ կարիք
են գգում, ուստի շարունակ աղ պետք է տալ,
բաց առյալ այն դեպքերը, յերբ նրանք արա-
ծում են աղառատ տեղերում:

Աղը տրվում է կամ ծեծած, վոր ածվում է
կերակրամանների մեջ, կամ տրվում է ուղղա-

կի աղաքար լիզելու համար: Այս աղաքարերը
նրանք, ըստ ցանկության, լիզում են: Աղն այն
հաշվով պիտի տալ, վոր ամեն մի գլխին որա-
կան հասնի մոտ 4—8 գրամ:

ՎՈՉԽԱՐՆԵՐԸ ՋՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ:

Վոչխարներին ձմեռը ջրում են 1-2 անգամ:
Մի անգամ ջրելիս՝ առավոտյան մինչև կերի
տալն են ջրում, իսկ յեթե ջրում են լերկու ան-
գամ, այս դեպքում ել ջրում են առավոտյան
կերից առաջ, իսկ լերկորդ անգամ՝ լերկույան
կերից առաջ:

Ջուրը միշտ թարմ և մաքուր պիտի լինի: Վոչ-
խարներին կանգնած ջուր չի կարելի տալ: Ջուրը
սառը չպետք է լինի: Սառ ջուրը շատ վնասակար
է վոչխարներին, մանավանդ ձանրածներին:
Ամառը լերը վոչխարն արածում է հյութալի
խոտ, որական մի անգամ են ջրում: Շոգ օրերին
լավ է լերկու անգամ ջրել: Առհասարակ վոչ
խարների ջրի պահանջը պայմանավորվում է
կերի բնույթով՝ վորքան չոր է կերը, այնքան
ավելի շատ ջուր է պահանջում վոչխարը:

ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ ԱՐՈՏԱՏԵՂԵՐՈՒՄ ՊԱՇԵԼԸ

Վոչխարը առավելապես արոտի կենդանի
յե, այս պատճառով նա իրեն հիանալի յե գգում
արածելիս:

Վոչխարների արոտատեղում պահելը վոչխարաբուծության համար մեծ նշանակություն ունի, վորովհետև այս դեպքում նա քիչ խնամք ե պահանջում, եժանացնում ե վոչխարների պահելը և նպաստում ե գառների կանոնավոր աճման: Սակայն ամեն մի արոտատեղ չի կարող վոչխարներին համապատասխան համարվել: Վոչխարի արոտատեղը պիտի լինի բարձրադիր և չոր: Ցած և խոնավ արոտատեղերը բացի այն, վոր անպետք են արածալու համար, այլ և վոչխարները վարակվում են վորովայնի ճիճուներով, վորոնցից ամեն տարի մեծ թվով վոչխարներ են վոչնչանում:

Վոչխարների համար լավագույն արոտատեղը համարվում ե լեռնայինը, իսկ ավելի լավը՝ ալպիական և յենթ-ալպիական արոտատեղերը: Անտառային արոտատեղերը (լեռնային և տափառակային) վոչխարների համար, քիչ պետքական են:

Արոտատեղերով ոգտվել կարողանալը՝ վոչխարների համար չափազանց կարեւոր ե:

Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները, վոչխարներին արոտի քշելուց առաջ, պետք ե անջատեն ծնած մաքրիներին, խոյերին, կրտածներին, և մատղաշներին, բաժանեն հոտերի մեջ, նալած վոչխարների քանակին, 300-500 գլուխ

ամեն հոտում, ամեն հոտին տան հովիվ և ոգնական:

Արոտատեղերն ել պիտի բաժանել տեղամասերի՝ համաձայն նրանց դրության և խոտի կանգուն լինելու, և վոչխարների ամեն մի խմբին հատկացնել համապատասխան տեղամաս:

Մի հեկտար միջակ արոտատեղը ամբողջ ամառվա ընթացքում՝ բավական ե վեց չափահաս վոչխարի, կամ տասը գառի:

Վոչխարներին արոտային պահվածքի պետք ե անցկացնել աստիճանաբար:

Առաջին ուրերին արոտ են հանում մի քանի ժամով և չոր կեր են տալիս գոմում: ալպեա շարունակել 7-10 որ, ամեն որ, աստիճաբար, յերկարացնելով արոտատեղում մնալու ժամանակը, վորից հետո նրանց արդեն անց են կացնում բացառապես արոտի կանաչ կերին: Տնային կերը կտրուկ կերպով միանգամից արոտին անցկացնելը փորլուծութուն ե առաջացնում, իսկ յեթե ծնած մաքրին հիվանդանա, վատ կլինի և գառի համար:

Արոտային պահվածքի ժամանակ, վոչ մի դեպքում չպիտի վոչխարին ջրել կանգնած ջրով, վորպետքի նրանք չվարակվեն ճիճուներով և չը հիվանդանան լյարդի հիվանդությունը: Շոգ ժամանակ վոչխարներին պիտի անել առանձին շեն-

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԳԻՐԱՑՈՒՄԸ

ՎՈՐ ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ ՊԻՏԻ ԳԻՐԱՑՆԵԼ

Գիրացման գնում են այն վոչխարները, վորոնք հասակի և ալ պատճառներով բրակի լեն լենթարկված՝ կրտածները, վոչ պիտանի եզ գառները և ավելորդ խոլիկները:

Գոյություն ունի գիրացման լերկու ձև՝ արոտալին, լերը վոչխարը գիրանում և արոտով և մսուրային, յերը վոչխարը գիրանում և մսուրային պահվածքով:

Արոտով գիրացնելը սովորաբար սկսվում և սեպտեմբերի կեսից և շարունակվում և 2-4 ամիս, նախած վոչխարի հասակին և արտատեղի դրությանը: Ձահել վոչխարները հասակավորներից արագ են գիրանում, այսպես՝ գառները որական տալիս են հավելում 120-200 գրամ, այնինչ նույն պայմաններում չափահաս վոչխարը որական հավելում և ունենում 65-130 գրամ:

Արոտային գիրացման հաջողությունը կախված և վոչխարների հմուտ ոգտագործումից:

Արոտային գիրացման ձեռնարկելուց առաջ վոչխարներին այնպիսի դրության մեջ պիտի դնել, վոր վոչ մի բան նրանց արածելուն չխանգարի: Այս նպատակով կտրում են դուրս ցցված կրճղակները, խուզում են աչքերի մոտի և ար-

քերի մեջ, վորոնք պիտի շինված լինեն արոտատեղերում թեթև շինանութից: Այսպիսին շինելու դեպքում՝ քշում են սովելի տակ՝ վոչխարներին պիտի արածացնել բարձր, բայց ցածրախոտ տեղերում, վոչ մի դեպքում չի կարելի արածացնել ցած, խոնավ և ճահճացած տեղերում, վոր տեղ կոշտ, կտրող խոտեր են (СОСРА) բուսնում:

Արոտային պահվածքի ժամանակ վոչխարներին շաբաթական գոնե մի անգամ աղ պետք և տալ, ամեն չափահաս վոչխարի գլխին 12-ական գրամ:

ԳԱՌԵՐԻՆ ԾԾԻՑ ԿՏՐԵԼԸ

Մեզ մոտ, սովորաբար, արոտային պահվածքի ժամանակ, գառներին ծծից կտրում են:

Գառներին մորից հեռացնում են յերեք ամսից վոչ շուտ: Այս չափից ավելի գառներին պետք չե մոր տակ թողնելը, վորովհետև հետագա գուգավորման համար նա չի կարող կազդուրվել և ամրանալ: Ծծից կտրելն էլ պիտի աստիճանաբար կատարվի՝ ավելի և ավելի քիչ թողնելով նրան մոր մոտ: Մայրերից հեռացրած գառներին շուկ պետք և արածացնել:

մասերի բուրդը, վորտեղ նա կեդտոտվում, չորանում եւ և խանգարում եւ ազատ ման գալուն։ Արոտային գիրացումը ամենաեթան ձևն եւ։

Մսուրային գիրացման ժամանակ հնարավոր եւ թե գառների և թե շափահաս վոչխարների գիրացումը։

Գառների գիրացումը մեզ մոտ քիչ եւ տարածված, այն ինչ գառները գիրացման ղեպքում շափազանց շահավետ արդյունք են տալիս։ Մինչև անգամ խոզի գոճիները, վորոնք հայտնի չեն իրենց արագ աճումով, գիշում են գառներին կերն ոգտագործելու շահավետության մեջ։

Փորձը հաստատել եւ, վոր ջահել գոճիների 40 կիլո աճման վրա ծախսվել եւ, 316 կերի միավոր, իսկ ջահել գառների աճման վրա—284 կերի միավոր։

Գիրացման համար նշանակված գառներին լավ եւ վերցնել 8 ամսականից և գիրացումը, շարունակել 3-4 ամիս։

Այսպիսի ղեպքերում հաջողվում եւ ստանալ բավականաչափ ճարպ և լոշոր մարմին՝ քնքուշ և հյութալի մսով։

Գառների գիրացման ժամանակ կարելի չե հանձնարարել հետեյալ նորմաները՝

8 ամսյա հասակին, 32 կիլո կենդանի քաշով—2 և կես կերային միավոր, վորից կես

կերային միավորը ուժեղ կերով։ Հետագայում ամեն մի ամսին ավելացվում եւ $\frac{1}{4}$ կերային միավոր կոշտ կեր։ Բացի սրանից, մինչև գիրացման վերջը, որական կերի բաժնի մեջ մտցնում են 1 կիլոգրամ գետախնձոր։

Գիրացվող գառների կերի բաժին տալու կարգը հետեյալն եւ՝ նախ տալիս են ուժեղ կերը, հետո կոշտը և ապա ջուրը։

Գիրացման ժամանակ եւ անհրաժեշտ եւ աղ տալ շաբաթական մինչև ութ գրամ։

ԶԱՓԱՀԱՍ ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԳԻՐԱՑՈՒՄԸ

Չափահաս վոչխարների գիրացումը մսուրային պահվածքով շատ եւ ընդունված չե և նա ձեռնտու չեւ։ Չափահաս վոչխարներին գիրացնելու համար կարելի չե հանձնարարել հետեյալ կերը։

Կենդանի քաշի 40 կիլոգրամին՝ կոշտ կեր 2 կերի միավոր—խոտ, դարման, և մի կերի միավոր ուժեղ կեր—գարի կամ սիմինդր՝ կեսվեկես կոպտոնի հետ—։

Չափահաս վոչխարների գիրացման ժամանակ, այսպիսի մեծ քանակությամբ կոշտ կեր, մանավանդ դարման, ուտեցնելը շատ դժվար եւ, ուստի նրանց պիտի ուտեցնել առավոտյան, լերը վոչխարները քաղցած են։

Գիրացումը տեղում է 2-4 ամիս:

Գառները և վոչխարների մսուրային գիրացման ժամանակ՝ անհրաժեշտ է հսկել, վոր գոմը ցուրտ չլինի (10° - 12° ցելսի) և վոր նա շատ լուսավորված չլինի:

ՎՈՋԽԱՐՆԵՐԻՆ ԽՈՒՋԵԼԸ

Չափահաս վոչխարներին, սովորաբար, խուզում են լերկու անգամ, իսկ խոյերին՝ մի անգամ: Առաջին անգամ խուզում են գարունը, լերը լեղանակը տաքանում է, իսկ լերկրորդ խուզումը կատարվում է մինչև աշնան ցրտերի վրա հասնելը:

Բուրդը լվանում են հենց վոչխարների վրա, կամ գետափներում, կամ հառկապես շինված ավազաններում, անպայման արև և տաք յեղանակներին, վորպեսզի վոչխարները չմրսեն:

Վոչխարներին պետք է խուզել մաքուր և չոր տեղ, փոխել նրանց տակ բրեդենտ, վորպեսզի բուրդը չկեղտոտվի: Խուզելու համար գործ են ածում հատուկ մկրատ:



Նկ. 13 Վոչխարը խուզելու մկրատ:

Պետք է խուզել վորքան կարելի է խոր, իհարկ է առանց կաշին վտանգելու:

Գեղմը (руно, բուրդ) խուզում և հանում են ամբողջովին և վոչ մաս մաս: Ամբողջ գեղմ են ամանալու համար խուզում են հետեկյալ կերպով. սկսում են խուզել փորը և կողքերը, հետո վոչխարին շրջում են կողքի և խուզում են հետին վոտները և հետույքը՝ նախ մի կողմից և ապա՝ մյուսը: Այնուհետև վոչխարին նորից դարձնում են գավակի վրա և խուզում են առաջին վոտները, վերջապես վոչխարի մեջքը դեպի դուրս դարձնելով, սկսած գլխից ու պարանոցից՝ խուզում են գեղմը մեջքից: Այս ձևի խուզվածքի ժամանակ գեղմը դուրս է գալիս ամբողջ:

Հանած գեղմը փռում յեն հատակին նեղսի կողմը դեպի վեր, վրա են քերում կողքերը և, սկսած պարանոցի կողմից՝ կտրվում են գլանաձև: Փաթաթները կապում են թելով և դարսում պանդակ են չոր տեղում: Կապած բրդերը լավ է դնել պարկերի մեջ:

ՎՈՋԽԱՐՆԵՐԻ ՊԱՇԵԼԸ

Վոչխարների ձմեռային մսուրային պահվածքը կախում ունի շրջանի կլիմայական պայմաններից, և, սովորաբար տեղում է 2-ից 5 ամիս: Համաձայն ձմռան տեղոգության և խստության՝

կարելի չե հանձնարարել պանագան տիպի վոշ-
խարանոցներ:

Վորովհետև վոշխարների ձմեռային պահ-
վածքից ե կախված նրանց արդյունավետություն-
ը, ուստի մեզ համար միևնույն չի կարող լինել,
թե վոշխարները ինչ շենքում և ինչ պայման-
ներում են պահվում:

Մեզանում տարբեր են նաև վոշխար պա-
հելու պայմանները: Մասամբ պահում են նրանց
ձմեռային արոտատեղերում, քշելով նրանց արոտ
ավելի տաք և արև ուրերին, յերբ վոշխարները
նույն իսկ ձյունի տակից կեր են ճարում. պա-
հում են նաև գյուղերում մսուրային պահված-
քով:



Նկ. 19. Տանիք-վոշխարանոցի տիպը:

Յեղնելով սրանից՝ մենք հանձնարարում ենք
մեր վոշխարաբուժական խորհրդային և կոլեկտիվ

տնտեսություններին վոշխարանոցների ախպիտի
տիպեր, վորոնք համապատասխանելն վոշխար-
ների մեծ քանակ ունեցող, սոցիալիստական
խոշոր տնտեսությունների պահանջներին:


Ձմեռային արոտատեղերի համար կարելի
չե հանձնարարել տաք—վոշխարանոցի տիպը:

Ախպիտի տանիք—վոշխարանոցի կառուցելը
չափազանց հեշտ ե. ցած քարե սյուների վրա
թեթև գերաններից դրվում են հենափայտերը
(стропила) ցանցավորվում, և ցանցի վրայից
լեղեգով և ապա հողով ծածկում: Տանիքում
պատուհաններ են թողնում և ողանցքներ անց-
կացնում:

Իսկ գյուղում կառուցվող վոշխարանոցները
հիմնավոր պիտի լինեն և համապատասխանեն
ժամանակակից տեխնիկայի և զոռառողջապա-
հության պահանջներին: Պետք ե կառուցվեն ախ-
պիտի հաշվով, վորպեսզի վոշխարներին հնարա-
վոր լինի պահել առանձին խմբերով, համաձայն
սեռի և հասակի:

Վոշխարանոցի համար պետք ե ընտրել բար-
ձրադիր և չոր տեղ. շենքը պիտի լինի չոր և լու-
սավոր: Պատուհանները պետք ե դնել հարավա-
լին կողմից, վորպեսզի ձմռանը և վաղ զարնանը
տրեղ ներս ընկնի և տաքացնի վոշխարանոցը:
Պատուհանների մակերեսը պիտի հավասար լինի
հատակի մակերեսի $\frac{1}{10}$ — $\frac{1}{12}$ մասին:

Վոչխարանոցը թարմացնելու և բամադարելու համար անհրաժեշտ է Մուխրի սիւտեմի ողահան խողովակներ անցկացնել՝ ամեն 50 գլխին մի խողովակ: Վոչխարանոցը պիտի ընդարձակ լինի և նրա մակերեսը այնտեղ պահվող վոչխարների թվին համապատասխան պիտի լինի ամեն մի խոյին պիտի ընկնի $1\frac{1}{2}$ -2 քառակուսի մետր և ամեն մի վոչխարին՝ 0,8—1 բառակուսի մետր, տարեկանից ավելի մատղաշներին 0,6-0,8. քառակուսի մետր, մինչև մի տարեկան մատղաշներին 0,5—0,6 քառակուսի մետր: Միջին հաշվով ամեն վոչխարին 0,7—0,8 քառակուսի մետր: Շենքի բարձրությունը արվում է $3\frac{1}{4}$ - $4\frac{1}{4}$ մետր, նայած վոչխարների թվին: Վոչխարանոցի տաքությունը պահպանելու համար հանձնարարվում է առաստաղ շինել, սա միաժամանակ պաշտպանում է կերը աղբոտելուց: Հատակը լինում է հողե, կամ կավից խառն ամրացրած (глинобитый).



Նկ. 20. Որինակելի վոչխարանոց:

Վոչխարանոցի կառուցման համար գործադրվող նյութը կարող է բազմատեսակ լինել՝ փայտ, քար, աղյուս, նայած տվյալ նյութերի առկայության և կլիմայական պայմաններին:

ՆԵՐՔԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ

Ցեղային խոյերի համար լավ է շինել առանձին կացոցներ (станки) $1\frac{1}{4}$ մետր բարձրությամբ և ամուր դռնակներով:



Նկ. 21. Վոչխարների մուրը:

Վոչխարների առանձին խմբերը պահելու համար վոչխարանոցը կարելի չէ բաժանել միջնոր-

ձեռքով բաժանումունքների: Միջնորդները կարող են
լինել շարժական: Վոչխարների համար զանազան
ձևի մսուրներ են շինում, բայց միշտ փայտեց:
Բոլոր փայտյա մասերը պետք է բոլորովին
վողորկ լինեն, վորպեսզի վոչխարները մսուրին
քսվելիս բուրդ չկորցնեն:

Վոչ մի դեպքում վոչխարներին չի կարելի
կերակրել՝ կերը գետնին դցելով: Այս դեպքում
կերը կեղտոտվում և տրորվում է վտառների տակ:
Վոչխարանոցում ջրելը չի հանձնարարվում, վո-
րովհետև սրանից առաջանում է անպետք և վր-
նասակար խոտավույթուն:

50

ՀՀ Ազգային գրադարան



NL0935348

ԳԻՆԵ 15 ԿՈՊ. (2 Վ.)

193/р. - 429

1

2931



Բ. ԴԱՆԻՅԷԼԵԿ

**ПОРОДЫ, РАЗВЕДЕНИЕ, КОРМЛЕНИЕ
И УХОД ОВЦА**

Госиздат ССР Армени
Ериван - 1951